Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները

2023 թ. դեկտեմբերի 2-3-ը, Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ)

3. Հրավիրող կողմը

Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Միջոցառման նպատակն էր ներգրավել մասնակից երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների, առողջապահության նախարարների, ովքեր հանդես եկան հայտարարություններով, որոնք արտացոլում են երկրի առաջնահերթությունները ներդրումների, քաղաքականության և տեխնոլոգիաների վերաբերյալ՝ ուղղված առողջապահական համակարգերի վրա կլիմայի փոփոխության բեռը թեթևացնելուն, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ կլիմա-առողջություն կապի ֆինանսական բացը վերացնելուն:

5. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև: Միջոցառման մասնակիցները առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումները կայացել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև մասնակից երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ քննարկումներ են տեղի ունեցել առողջապահության ոլորտում երկրների ձեռքբերումների և հեռանկարների շուրջ: Անդրադարձ է արվել նաև հնարավոր համագործակցության արդի ուղղություններին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Կլիմայի փոփոխության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կողմերի 28-րդ համաժողովի (COP28) ընթացքում կայացած «Առողջության օրվա» նախարարական հանդիպման շրջանակներում ներկայացվել է Կլիմայի և առողջության մասին հռչակագիր, որին միանալու նպատակահարմարություն է հայտնել նաև ՀՀ առողջապահության նախարարությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառելու: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

2023 թ. դեկտեմբերի 6

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 1217-Ա 30.11.2023թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)	Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը	Արաբական Միացյալ Էմիրություններ ք. Դուբայ
5. Գործուղման ժամկետները	2023թ.դեկտեմբերի 2-3-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)	
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)	Ճանապարհածախս, գիշերավարձ և օրապահիկ

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս Անահիտ Ավանեսյան	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	147,250.0	147.25
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 207.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	83,543.1	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	83,543.1	83.54
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 127.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,256.0	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	102,511.9	102.51
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**333.30**	**333.30**

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը 13.12.2023թ.